ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22/06/2026թ.

Հարգելի պարոն Ա.Սիմոնյան և Հ.Միքայելյան

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի և կոնսորցիումով հանդես եկած «Էդառա պլաստ» ՍՊԸ, «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ միջև 14/11/2025թ. կնքվել է «ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/32» ծածկագրով պայմանագիր 32256000/երեսուներկու միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար/ դրամի չափով:

Պայմանագրի վերջնաժամկետ է սահմանվել 13/04/26, սակայն, սահմանված ժամկետում պայմանագրի կողմը՝ «Էդառա պլաստ» ՍՊԸ, «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ -ն/կոնս/, չի ավարտել աշխատանքները և չի վերացրել պատասխանատու ստորաբաժանման կողմից ողջամիտ սահմանված ժամկետում հայտնաբերված թերությունները:

Հայտնում ենք, պայմանագրի կողմ հանդիսացող «Էդառա պլաստ» ՍՊԸ, «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվում են «ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/32» ծածկագրով պայմանագրի 3.1.4 կետի բ,գ և դ ենթակետերը, 6.3 կետը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում/ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունը,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պատվիրատուի՝ Ալավերդու համայնքապետարան, պատճառաբանված որոշմամբ Ձեր կազմակերպությունն ընդգրկվելու է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և պայմանգրի ու որակավորման ապահովման երաշխիքները ներկայացվելու են համապատասխան առևտրային բանկ՝ գանձումներ կատարելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Պատվիրատուի 900265121104 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին: Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝

անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Պատվիրատուի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին: Նշված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ